

ՀԱՅՈՐ ԽԷ.

1889


ՄԱՅԻՍ

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ք

ՏԵՍՈՒԹԻՒՆ ՏԱԹԱՂԱՐՁՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐՈՅՆ

ԵՒ ՀԱՅԵՐԷՆ ՆՇԱՆԱԳԻՐՈՑ ՎԵՐԱՑ

(Տես էջ 97)



ԱՅՑ գարուց և ժամանակաց պէս պէս յեղափոխութիւնք, յորոց կախուած են ազգաց և ժողովրդոց քաղաքային և մտաւորական վիճակք, հարկ եր որ ուշ կամ շուտ Հայոց գրազէտ դասն ևս ամէր հետ զհետեւ այն խոստոր մոլոր բաւղին մէջ, յորում կը գտնուէր արդէն 'ի վաղուց անգրազէտ դասն: Արդ, ինչպէս հինաւուրց Բարեւոյնի խառնակութենէն ծնան հին լեզուներն, այսպէս ևս մէկ կողմէն

միջնագարեան խառնակութեան և ժողովրդոց կղզիացման իբրեւ անմիջական հետեանք, իսկ միւս կողմէն այլ մտաւորական և քաղաքական յեղափոխութիւնք՝ ծնան նոր լեզուներ: Ահաւասիկ մի նոր շաւիղ, որ պիտի տանէր ձգէր զգալութիւն Հայոց 'ի բաւիղ անգր անեւանքի՝ խառնակ տառագարձութեան, որ թէպէտ և յամի սկսաւ՝ բայց հակադասաբար յառաջեց ժԱ. ԺԲ. ԺԳ և յաջորդ գարուց մէջ: Գրեթէ մի և նոյն ժամանակամիջոցին կրկին շփմանքներ տեղի ունեցան ի Մեծ և ի Փոքր Հայոս: Առաջինը՝ Թրքաց և Թաթարաց հզոր ազդեցութեան ենթարկուեցաւ. իսկ վերջինը՝ Փրանկ կամ Հատին ազդեցութեան: Արկին Ներսէսք, որոց մին շնորհազարդ ունի, իսկ միւսը՝ լամարաբայլ գրութեան հեղինակներ լինելով, մաքրեցին վերստին Հայոց գալութիւնն և իրաւամբ Թարգմանիչք անուանեցան, և Գրի. Վկայասեր, շէն զերծ 'ի խոսորնակի յամարագրութեանց: Վերջնոյս (Ոսկիբերանի Պատմաւ.

(Թեան՝) Թարգմանութենէն միայն մի քանի օրինակներ մէջ բերենք, իբրև ներկայա-
ցուցիչ ժիւղաբուն: Յունական անունն Σύγχλιτος մերթ «սնդիլիտոս» մերթ «սնդիլի-
տոս» դարձուած է: Αεόντιος և Κωνσταντίνοςը՝ Ղևոնտէս և Կոստանտինոս դարձուած
են ուղղապէս, բայց հակառակ նախնեաց կիրառութեան, որք միշտ դ գրած են: Ιν-
nocentiusը՝ «Իննոկենդիոս» և Ինովկենտիոս: Θεοδόριοςը՝ «Թէոդորիոս» դար-
ձուած է բազմիցս, Όλυμπία կամ αςը «Ոլիմպիա» և Ոլիպպիա, Θεοσιώτηςը՝ սէոսի-
օտիւս և Թէոսիօտիս: Իսկ նախընթաց զուգանուն հեղինակներն յունական անուանց
յարմարագրութեան մէջ գրեթէ միշտ ուղիղ ընթացած են, բայց ոչ նոյնպէս ի
լատինականս. օրինակի ազագու. Լամբրոնացին՝ ի Թարգմանութեան անդ կարգաց
Ելենդեցոյ և Թղթոց Քահանայապետաց, լատիններէն letanie՝ «Լեդանիա» դարձու-
ած է, Lucius (Լուկիոս) «Լուսիոս», Lateranusը «Լադրան», Octoberը «Հոգ-
տեմբեր», Federicusը «Փէլտրիք», այսպէս են «Ունկիոս» (Ունդարիա) և Սէլէֆ-
կիա, Բենէդէքտոս, Պէրպէղուս, Աննէշ (Agnes), Յիբիլի (Cecilia), Լաւենդիոս,
Վինցէնդ, Աղոստէն, Ճէրոնիմոս և այլն: — Արդ գիտելու կէտ մ'է այս, զի մի և նոյն
Լիւթանիայի Թարգմանութեան մէջ՝ Ծանօթ յոյն անունները ճիշդ ուղղագրած է
մեծ հայրապետս, բայց լատին անուանց մէջ՝ մի քանի տառերու ձայնն իսկ բոլորովին
փոխուած են, ինչպէս eu = ֆ, c = ց, k = յ, g = զ, k = զ, և c = u և h = x: Սակայն
այս երևոյթն միայն Լամբրոնացոյ ընծայելի չէ, իբրև լատին ձայնից անտեղեկ եղո-
ղի, այլ հաւանօրէն՝ նոյն իսկ փռանկ և գերմանացի Ժողովուրդներն են այդպէս կը
հնչէին՝ այն ժամանակ սոյն տառերս, երբ լատին կամ դասական լեզուէն և արտա-
սանութենէն խոտորեւում սկսան կազմակերպել Ժողովրդական նոր բարբառներ և
արտասանութիւններ. և այսպիսի խոտորման նախկին պատճառը՝ նոյն է առ Փռանկս,
որ ինչ առ մերայինս. այսինքն է, յաջորդաբար անկումն և մոռացութիւն լատին
գպրութեան ի միջին դարս:

Կիրակոս և Վարդան իբր ներկայացուցիչք ԺԺ. դարու. ինքնագիր երկասիրու-
թեանց մէջ իսկ Benedictusը՝ Բենետիքտոս, Tancredi կամ Tancretiusը՝ Դանդրէտի.
Διοτρητες, ըստ փռանկ հնչման, Դիոթէն, Θεοδόρη Թոտոր, Δαγαριεζ Լէլարիս, Bemun-
te Պէմունդ, Φιδωδεοςը Փիլոտոս, Ρόδοεը՝ Ըռոտոս, Φαρασαγγησε բարսաղ, Καρχηδών
Քարկիդոն դարձուցած են: Արդ յայտնապէս կը տեսնուի, թէ այս ժամանակամբ.
Չոցիս ոչ միայն լատին և փռանկ ձայնից մասին, այլ նոյն իսկ յունականաց առ հա-
սարակ՝ չիք ոչ գիտութիւն և ոչ այլ կարգ և կանոն. այլ Հայք ինչպէս որ կը լսէին
Փոքր Հայոց հարիւրաւոր գաղթականաց բազմախուռն և բազմաշփոթ ձայներն և
խզուըրոհուն՝ այնպէս ևս ի գիր անցուցանէին, որով ծ և d = ա, β և b = պ, ց և
th = տ և ք, x և c = գ և ք, γ և g = փ, χ = կ: Սակայն այս վերջին պարագային վրայ
յաւելցնելու է, ըստ իս, իբրև երկրորդ պատճառ աղաւաղ ուղղագրութեան՝ հա-
յերէն գաղական լեզուին անկումն և աշխարհիկ բարբառային ևս միջօրէնի ընդ-
հանուր տիրապետութիւնն, որուն համար քաջակիրթ գրագէտք անգամ՝ օտարական
Ժողովրդեան բարբառով և արտասանութեամբ գրել՝ հասկանալի լինելու համար
Եւ ասոր իբրև շուպիել օրինակ կարելի է յիշել Գօշի գատաստանագրոց ռամօրէն
Թարգմանութիւնն՝ ի ձեռն Սմբատայ, յորում մանկէն աւելի ուղղագրութեան սխալ

1. Այս զբաղիրս հնազոյն է, և կարելի է, թէ Թարգմանութենէն քիչ յետոյ, պսիքն յամի
Տեառն 1100 էն վերջ գրուած լինի: Եի յէջ 230 Յիշատակարանի մէջ զբաղիրս կը յիշէ զԹարգ-
մանիչ Նայրապետ և զ՝ Սառաստանն յ Ալեքին, պսիքն է, զայսն Ն. Լամբրոնացոյ:

ներ կան քան յայլս ժիւ և ժե գարերն ևս նոյն խուռներն թաց հոսանքով և բազմաշառաջ ձայնարկութեամբ կը յաջորգեն իրերաց, միշտ խոտոր ճանապարհներ բանալով հետախուզին առջև. մինչև որ կը հասնի լեզուական աւերածոց և գրական ամայութեան վրայ տերապետող Կռնոսի որդին. այն ինքն է, ժԶ գարը. յորում հազիւ թէ լսելի կը լինի իրենց բնիկ հայրենիքէն խլուած աստանդական Հայոց ձայնը, բայց տարին ազդեցութեան ներքեւ այնպէս փոխուած, զոր հազիւ թէ կարէ որ ճանաչել: Առ այս օրինակ ըլլայ մեզի Ղափանէցի ոմն Փերգատէ, որ գրելով զՌուս զեռորութիւն իւր 'ի Հալէպ, այսպէս կը խօսի. « Ես մեղաւոր Փերգատէ Ղիզիլպաշին երկիր Ղապանէն, խորտոկն ձորէն Կնդոս գետաժողէն, Պատամեցէյ ասքէն Զաքէրի Թոռն Փարոն Պահալէն աղբէր: Ին տարին որ Հայոց թվ էր ՌԼԵ որ ես իմ տանէն ելա կնիցի Պաղէ քաղաքն . . . Էնկից Աստամբու, Էնկից Ատրնայ և այլն »: Թողով ձորա գրութիւնն և լեզուն, հետեւեալ անուանք միայն մէջ բերենք. « Մարքոս Աւետարանիմ, ծով (ծով) կարմած, Բողոս (Պողոս), Փափ, Փիլորէնցա, Լուքա, Թորին, Փիլիբ, Եփեցա (Զուբգ), Մինուկն (Մնուկ), պատարաք, Լարփրին (չարիպ), գուտեն (հուտեն) »: — Այս գարունս, կամ լու ևս, աղետալ տգիտութեան կնիքն այնու կը տարբերի յառաջից անտի, զի նոքա տար անուանց և բնիկ լեզուին այլ՝ նորակազմ անուանց միայն գրաւոր հնչիւններն աղտուակեցին. իսկ օտ՝ աղջայնն և ամենագործածական բառերուն անգամ, որ քաջ կը հաստատէ մեր 'ի վեր անգր ենթագրութիւնն. այսինքն թէ, յարմարագրութեան խանգարիչ պատճառաց մէջ՝ առաջին տեղին ունի գպրութեան տգիտութիւնն:

Լսենք այժմ Առաքել Դավթիճեցւոյ ձայնը, որ իւր պատմագրութեամբը կու գայ մեզ 'ի հանգէս, իբր ներկայացուցիչ ժիւ գարուն, և Հայաստանի միջնախորհրդի գաւառական հնչմանց. « Ձալապի, Մէլիքատա, մուղադա, փաքշահ, Թճանք, Թաւրէզ »՝ այլովքն հանրած: Յամբն 1738 գրուած Եպրաթիմէն հայազգի եպիսկոպոսի մի Յիշատակաբանի մէջ, որ կը գտնուի 'ի դիւանի վանացս, այսպէս տառագրւածուած են հետեւեալ անուանքս. « Պիլէնցա, Պիլիք (Բիքա), Մոնրպան, Կարպան, Թորոգա, Կալիւ, Փամիլու, Գոռուա »: Իսկ 'ի վերջ 4-րդ թվ գարուն (1794) Երևանէցի ոմն Իբրև ներկայացուցիչ պարատետն և երևանեան բարբառոյն և գրականութեան, Իլիւմաբի թարգմանութեան մէջ այսպէս կը գործնէր հետեւեալ յոյն և լատին անուանքը. Baccus Պաքքին, Acherontia Աչերոնիա, Փալէմոն Ֆելեմոն, Φειδοκτιτ' Ֆիլոքթի, 'Αἰγισθος 'Αίθισ, 'Αδραμας Աթհամահ, Φρυγία Փրիգիա, 'Εὐβοια Էյուպի, Iupiter Դուպիթեր, Δαναός Տանաօ, 'Αγαμέμνων Ահամէոն, Νέστωρ Նէսթոր: Թարգմանիչն՝ այս յունական անուանց զոմանու ըստ գաղղիբաբն հնչման՝ իսկ զայլս թուրք և պաւ արտասանութեան համաձայն գործուցեր է. բայց ոչ միոյն և ոչ այլ միւսոց հաւատարիմ մնացած է. ուստի եթէ նմա միայնոյ սեփական համարինք, և եթէ հասարակ նորա գաւառակցաց, այս յայտ է, թէ երեքէն ևս ազդեցութիւն կրած է, և երեքին ձայներն ևս շփոթած է 'ի հայազման անդ:

Հայեացք մի տանք ժիւ գարուն առաջին կեսին եղած տառագրութեանց վրայ: Եամբն 1838-39 'ի Մոսկուս լայս տեսած պարսկահայ և ռուսահայ հեղինակութեանց մէջ ևս կան հակառակ այժմեան Արեւելեան տառագրութեան տառագրութիւն. ներս 'ի իտալեան ենք, նոյա գրականութիւնք թէ և Տաշկանայոյ կամ Արևմտեայոյ գրականութեան ուս սկսու, բայց շուտով բարգաւաճեցաւ: Արգ վերջիններս՝

1. Մասնաւորապէս Սալանթեան Միքայէլ վարդապետի և մի քանի ուրիշ Պօլսեցի ուսուցչաց և գրագիտաց ձեռքով:

ինչպէս եղան ռահաւորք առաջնոց գրականութեան, այսպէս ևս կարելի է կոչել հեղինակս խոտոր տառագարմութեան, նկատմամբ միայն յոյն, լատին և փռանկ առնուածագրութեանց. յորս ք փոխուած է 'ի փ, Կ 'ի ք, ծ 'ի տ, ք 'ի ք, ց 'ի կ, ֆ և ֆ 'ի ց, ց 'ի չ, և և 'ի ֆ, և և 'ի ց. օրինակի աղագաւ Յառնիւնց = Պատիւտեան, 'Αριστο = Տոս = Արիստիտես Տալմանոս = Սոթոմնոս, Gaudentius = Կաւտենդիոս, Donatus = Տոնատոս, Cicero = Չիքլեան, Horatius = Հորացիոս, telegraphie = քելեգրաֆ, logica = լոգիկա. Արդ լատին տառից ձայնագրութիւնը բոլորովին նոր բան չէր ոչ առ Տալմանայոս և ոչ այլ Ռուսահայոց քով, զի առ Ներս. Համբարումացիս անանք զայն: Այլ ռուսերէն և վրացերէն բնագրոց թարգմանութեանց մէջ եղած տառագարմութիւնք՝ յատուկ են Ռուսահայոց, զորս ոչ ճանաչէին Արեւմտեայք, տառագարմութիւն մի կ'ըսեմ, այնպէս օտար և այլնդակ՝ յորում իւրաքանչիւր անուէն բաղմանկարպեան հրէի մի ձև առած է, և հրէից՝ որք առաջ եկած են ոչ միայն գերմանական և ռուսական և գաղղիական տարերաց զուգարմանութիւնէն, այլ նոյն իսկ հայերէն գաղղութեան անտեղեկ թարգմանչաց կամայականութիւնէն: Արդ այսպիսի տառագարմութեանց մէջ գաղղիարէն ց և սլաւ Դ հաւասար եղած են կենի, իսկ գերմանական ց (գ) առաւ = խ. Collège, Коллегія = Կալէկ, Feldzeugmeister = Ֆելդցեյմէյստեր, Այլուր գաղ. ց և ռուս. Դ = զ. օրինակ իմե՛, général. Генералъ եղած է Դէնեբալ, Կարմալ, զատի փոխուած են զերմ. և և ռուս Դ, husard, Гусаръ = Դուսար, Կերմ. id և ռուս. Գ և Լճ փոխուած են ֆրդ և ֆոր, օրինակի աղագաւ Feldmarschal, Фельдмаршалъ = Ֆերք կամ Ֆերմարշալ, շալ Կան գեռ մարիշ անկանոն թագաութիւնք ևս խոտորմունք ևս հակառակ ուղիղ յարմարագրութեան, զորս « Հանգիսի » մեծապատիւ յօգնածագիրն ընդարձակ օրէն և քաջ զննելով՝ զմին « կէս 'ի կէս », և զմիւսն « կրկնաձև » տառագարմութիւններ կ'անուանէ. լռելով նոցա բուն պատճառքը: Սոցանէ՛ առաջնոյն առանձնալատութիւնն է, մի և նոյն անուան մ'ուղղագրութեան մէջ՝ լատին d և սլաւ Д մին գայի և միւսը արևելի փոխել. օրինակ իմե՛ ДЕМУДОВЪ = Դեմիտով, և և Т գայի, ինչպէս գէփոնդատ. Գարմալ d և Д = Թ, օրինակ իմե՛ СЕКУНДЪ = հուսկ ուրեմե՛ և և 6 = պ, և և 3 = ս, օրինակի համար ОБРѢКОВЪ = Արբրէսով, իսկ կրկնաձև են « Բանկրատէ և Պանկրատէ, Ռուրի և Ռուպի, Արքա և Արպա, Դարպալ, և Դարարալ, յորս պ = ք. Ծորագել և Ծորակալ, Մարագալ և Մարակա, յորս գ = կ. Թաքիր և Թագիր Թան, Բաքու և Բագու, յորս ք = գ. Մասուտ և Մասուդ, Արտաբիլ և Արդարբիլ՝ յորս տ = գ. Դաւրիդ և Թաւրիդ՝ յորս գ = Թ. Արդ այս և ասոնց նման գեռ ուրիշ անախորժ երևութից անշուշտ իբրև պատճառ համարելու ենք մասամբ մի ռուսերէն մի և նոյն տառից այլ և այլ բաղաձայներու և ձայնաւորաց քով գալով՝ ձայնագրութիւն. իսկ մասամբ այլ թարգմանչաց կամայականութեան ընծայել է. կամայականութիւն՝ ար առաջ եկած է, հայերէն տառերու հնչման և աստիճանաւորութեան վրայ որոշ գաղափար չունենալէն: Եւ յերմաի, այս մասին նոցա օրագրաց մէջ իսկ բաղմոյն տրտունջք լուսեցան և կը լուսին 'ի ձեռնհաս անձանց, թէ ուղղագրութեան համար որոշ կանոններ չեն պահուիր, մանաւանդ թէ ռուսանոց իսկ կը վարդապետուի յաճախ, թէ այսպէս ալ կը գրուի այնպէս ալ, որով նոքա չեն կրնար ուղղագրութեան հաստատուն գաղափարն իրենց մէջ տարբացնել:

Ահաւասիկ այսպիսի բաբելոնական խառնակութեան հասած էր մերօրվեան յարմարագրութիւնն, որ ամենէն աւելի Մարտագի հայագէտները շփոթեց և վարան:

մանց մէջ կը տաքնապեցնէր։ Այսպիսի խառնաշփոթ ժամանակի մէջ երբ Նւրու-
պայի այլևայլ կողմերէն արտունջէս յայտնուեցան այնպիսի կամայական աղաւ-
աղութեանց գէմ, ելաւ եռանդուն և գործունէ այ վարդապետն Գ. Ալվազովիկի,
իւր համախոհ գրագէտ դոստըն Հետ, և միակերպութեան մի վերածելու համար,
հաստատեցին նոր Տառադարձութեան վարդապետութիւնը, հիմնելու մասամբ ժիւ և
ժԴ դարուն վերոյիշեալ հեղինակութեանց, և մասամբ այլ նորընդունաց արտասա-
նութեան վրայ, ըստ տանելոյ լսելեաց իւրեանց։ Այս վարդապետութիւնն և թէ ոչ
ըստ ամենայնի ուղիւ, այլ գէթ իբրև ընդելական ինչ լսելեաց՝ ուրախութեամբ ըն-
դունեցան Տաճկահայք, և որ աւելի զարմանալին է, նաև ոչ սակաւք յիտալացի և
'ի գաղղիացի հայագիտաց։ Իսկ Գերմանացիք իրենց խորհող և ճշգող դատողու-
թեամբ ոչ միայն իբրև օտարոտայ իմք բողոք բարձին անոր գէմ, այլ նոյն իսկ 'ի
գործնականին՝ չգաղթեցան հետեւել նախնեաց յարմարագրութեան։ Չայն միայն
գտնելով համաձայն հնդեւրոպական լեզուաց հնչման։ — Արդ Ռուսահայ մտաւ-
նագրաց ոմանք ձեռքով եղած տառադարձութեան այսպիսի ծայրայեղութիւննե-
րէն կարելի է արդեօք հետեւցնել, թէ ողբա ևս առհասարակ խտրութեան լինին նախ-
նեաց կամ մերօրօքեան տառերու հարազատ արտասանութենէն։ Ոչ քնաւ. և յի-
րաւի, եթէ այդ ընդարձակածաւալ հայ ազգարնակութեան մէջ (վասն զի անոնց կը
համաձայնին նաև Պարսկահայք և Հնդկահայք) իրօք մոռցուած լինէր այն հարազատ
արտասանութիւնը, նոքա այնպիսի սուղ ժամանակի մէջ պիտի չստնողէին, վերստին
զայն ձեռք բերել, և նախնեաց յարմարագրութեան աւերեալ և խաթարեալ սահ-
մաններն հաստատել, թէպէտ և թիւր Պատկանեաններ, Արտիւաններ և Նազարեան-
ներ իւրեքն և քարոզէին. ինչպէս չկարացին ուղղել մինչև ցայսօր Արևմտեան Հայք,
որոնց մէջ մեծապէս փոխաւած են հին արտասանութիւնը և նորերն են արմատա-
ցած։ Բ. Արևելեայց կամ Ռուսահայոց գրագէտ և անգրագէտ դասուց արտասա-
նութեան մէջ տարբերութիւն չկայ. մինչքեւ Արևմտեայց կամ Տաճկահայոց այդ-
երկու գաղափարութեան արտասանութիւնք իրարմէ մեծապէս կը տարբերին.
իսկ որովհետև Տաճկահայոց ամենէն աւելի ձեռնհաս անձինքն՝ իսկ կը խոստո-
վանին, թէ Ռուսահայոց յարմարագրութիւնն համաձայն է նախնեացին, ուրեմն կը
հետեւի թէ Արևելեան գաւառաց հայ ազգարնակութեան արտասանութիւնն ևս

1. Գ. Ա. Ս. Սրտանմանեան որ անձամբ լսեց այդ երկակողմեան հայ ազգարնակութեան արտա-
սանութիւնն, այսպէս կ'ըսէ. «Դեռ մեր վարժարաններու մէջ չկրցան տառերու հնչումն անգամ
ուղղել... զոր օրինակի ք ստաի ձայնը Պոլսեցին և Պոլսեցոց վարժութիւն ունեցող անձինք կը
հնչեն Բ ի ձայնով. Ռուսաստանցիք և Հայաստանի մէջ ծնած բնակածներ կը հնչեն Բ ի ֆ
ձայնէն տարբեր, հնչե զաղջիւրէն մ և տանկերէն յ տառերու ձայնով. Ղ տառը՝ Լ ի ձայնով կը
հնչեն Պոլսեցիք. իսկ միւսները՝ հնչե զիւր ջիւմ ի ձայնով։ Բը կը հնչուի իսկ ք ի ձայնով. իսկ նոքա
կը հնչեն զաղջիւրէն Ե և տանկ. Ե ի ձայնով։ Գը + ք ձայնով կը հնչեն 'ի Պոլսոյ. իսկ նոքա +
և ձայններէն տարբեր, տանկերէն Ա գեաֆի ձայնով... Երես կը սխալինք, այո, երբ Բ, ք, Գ,
Ե, և տառերը ք, +, Բ, Ե, և տառերուն տեղ կը դործածենք. և կրկին կը սխալինք երբ Գ, Ե, Գ, Ե,
և տառերն ալ Բ, ք, Գ, Ե, և տառերու ձայներով կը հնչենք,» ԳՐՈՑ ԵՒ ԲՐՈՑ. — Իսկ «Սոյալ-
Նոյսէի» Թարգմանիչը Գեորգ Արվերդեան յամին 1882 կը գրէ յէջ 4. «Թիֆլիսեցիք բաղա-
ձայններն հնչում են պարզ ու հաստատ ձայնով, ու կարգալիս՝ նրանց չկն տալի միշտ ու անորոշ
ձայն, ինչպէս ունին ամբողջութեան Չմիւսնիւոյ, Պոլսոյ և ուրիշ արեւմտեան Հայեր։ Չու, Զու,
ցու տառիս՝ որանց Եւրոպացոց ակնալի կամար միտայն ձ, Ժ, ց գրերն եկաւն անխառն Եւ
լու», որ միշտ կարող ենք զանալովն ևս տառերու ձայնական յատկութիւններն։ Պոլսոյ հայն
Buffon, Tasso, Hardi, Garnier յատուկ անուններն գրում և Պիֆֆոն, Բոսսոյ, Հարտի և
կարմեւ. Գրերն էլ կարգալիս՝ միամիտ ստում են Puffon, Thasso, Hardi, Garnier. Էս հնդգա-
մապա մտում և միշտ տարադատեանց պատճառ. ։ Սոյն կարծիքս ունին նաև Գեորգ. 2. Ա. Ա-
ղբեան, Պետրոս, Նրեօգէր, լազար, Հիւլիման, Վէլզեր և այլ Եւրոպացիք։

աւելի համաձայն է նախնեացին, և թէ Արեմոնայ Հայոց գրազէտ դասն է միայն, որ շնորհիւ նորահար տառափոխութեան՝ փոխած է նոյնպէս հայկական տառերու նախկին արտասանութիւնքը:

Ռուսահայոց ինչպէս նոր գրականութեան՝ այսպէս ևս նախնեաց յարմարագրութեան վերահաստատութեան իբրև ուղղիչք և զարգացուցիչք եղան վերոյիշեալ երեք հեղինակներս և նոցա գպրոցները. սակայն ինչ կը թուի, թէ սոքա ևս 'ի Գերմանացւոց անտի ներշնչուած ձեռք զարկին այսպիսի մի բարեկարգութեան, առ որս ուսան և զգիտութիւնս: Թէպէտև 'ի Տփղիս հրատարակուող «Մշակ» և «Հայկական Աշխարհ» թերթերու մէջ, որոնց առաջին տարիներու մի քանի թիւերն միայն աչքէ անցուցի, տակաւին կը լինէին անձիշտ տառադարձութիւնք 'ի բազում տեղիս, բայց որովհետև ժողովրդեան անգրագէտ մասի արտասանութեան համաձայն էր այն հինաւուրց յարմարագրութիւնն՝ այն պատճառաւ իսկ առանց մեծի դժուարութեան ընդհանուր եղաւ: Միայն թէ կան այժմ դարձեալ մի քանի յատուկ անուններ՝ զորս Ռուսահայոց լրագրէք կը շարունակեն հակառակ իրենց պահանջած սկզբանցը տառադարձել. օրինակի աղագաւ Parisը «Փարիզ» և նախնեաց Տփղիսը՝ Ռիֆլիզ, ևայլն: Ժողովրդական լինելէ դուրս՝ չեմ կարծեր որ ուրիշ բանաւոր պատճառներ ևս լինին այսպիսի մի թիւր կերպութեան. իսկ ժողովրդականութիւնն եթէ իրք բաւական պատճառ մի է, ինչո՞ւ համար չպիտի զօրէ նոյնպէս միւս անուանց համար ևս, որոց ուղղագրութեան, ընդ հակառակն, այնքան վրէժխնդիր են Ռուսահայք:

Շարունակելի

Հ. Բ. ԱՐԳԻՍԵՅԱՆ

ԱՆՅԱՅՏ ԿԱՄ ԱՆՎԱԻՆԵՐ ԳԻՐԳ

Ի ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ

Աստուածաշունչ գրող մէջ բայց առանց անոնց մասն սեպուելու՝ կը գտնուին նաև բողոքովին անհարազատ գրութիւնք, որք երբեմն իբրու անոնց մասունք՝ շատ զրչագրաց մէջ ալ անցած են: Այսպիսի թէ հին և թէ նոր կտակարանի պատկանող երկասիրութիւնք բազմաթիւ են առ այլս 'ի բրիտանոնեայ հին ազգաց, բայց նաև առ մեզ ոչ աննշան թուով ու իրաւամբ հետադրեանակոյն: Ընդհանուր և առհասարակ ընդունելի կարծիք մ'է՝ թէ ասոնցմէ շատին յօրինողք և յերկրողք՝ քրիստոնէական կրօնքն ընդունող Հրեայք եղած ըլլան՝ հին կտակարանին մասն ենթադրուածներն, հասարակաց թուականութեան առաջին դարերէն. նորոյն ալ՝ Վնոստիկեան աղանդաւորք՝ ունինալով իրենց մասնաւոր գիտումն ու նպատակը թէ առաջինքն և թէ վերջինք: Բայց մեր վախճանէն զուրս ըլլալով ասոնցմով զրադիւն ու զբաղեցընելը, բաւական սեպելք համառօտիւ յիշատակել՝ ինչ որ այս նկատմամբ աւանդած ու հասուցած է առ մեզ հայ գրականութիւնն:

Ասոնց մէջ առաջին է կարգաւ և ժամանակաւ, — որովհետև յաճախ զրչագրէր անմիջապէս Ծննդոց գրքէն վերջը կը կարգին զայն, — կտակք երկոտասան նահապետաց կոչուածը: Հաւանական կ'երևնայ թէ